ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5474-Ա « 09 » նոյեմբերի 2026թ.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանը՝

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարին՝

1) սույն որոշման հավելվածի համաձայն՝ կազմակերպել և ապահովել «Երևանի հ. 3 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 38 մսուր-մանկապարտեզ» «Երևանի հ. 61 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 65 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 68 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 74 մսուր-մանկապարտեզ», Երևանի հ. 94 մսուր-մանկապարտեզ» և «Երևանի հ. 141 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու մրցույթների (այսուհետ՝ Մրցույթ) նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման իրականացումը.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության օժանդակությամբ ապահովել սույն որոշման հավելվածին համապատասխան, հայտարարության հրապարակումը http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում՝ (www.yerevan.am).

3) ապահովել մրցույթին մասնակցելու համար քաղաքացիներից դիմումների և դիմումին կից ներկայացվող այլ անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը և մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

2. Ընդունել ի գիտություն, որ մրցույթն անցկացվելու է Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման N 1 դահլիճում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
09.11.2026թ.
հ. 5474-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Թափուր պաշտոնի անվանումը	Մրցույթ անցկացնելու վայրը, օրը և ժամը	Հայտարարության հրապարակման օրը
1.	«Երևանի հ. 3 մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 09.12.2026թ. ժամը՝ 11:00	09.11.2026թ.
2.	«Երևանի հ. 38 մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 15.12.2026թ. ժամը՝ 11:00	13.11.2026թ.
3.	«Երևանի հ. 61 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 17.12.2026թ. ժամը՝ 11:00	17.11.2026թ.
4.	«Երևանի հ. 65 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 17.12.2026թ. ժամը՝ 11:00	17.11.2026թ.
5.	«Երևանի հ. 68 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 23.12.2026թ. ժամը՝ 11:00	23.11.2026թ.
6.	«Երևանի հ. 74 մսուր- մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 23.12.2026թ. ժամը՝ 11:00	23.11.2026թ.
7.	Երևանի հ. 94 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 24.12.2026թ.	24.11.2026թ.

		ժամը՝ 11:00	
8.	«Երևանի հ. 141 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 25.12.2026թ. ժամը՝ 11:00	25.11.2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**